ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2019 թ. N 313-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի «Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 502-Ն որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի ապրիլի 30-ի
N 313 -Ն որոշման

Աղյուսակ

ՆՈՐՄԵՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԿ ԿԱՎԱ-ԱՎԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՎԱԶԱ-ԿԱՎԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՋՐՄԱՆ ՈՒ ՈՌՈԳՄԱՆ

Ծովի մակարդակից մինչև 500 մետր բարձրություն

Հ/հ	*Մշակաբույսը*	*Ջրումների քանակը*	*Ջրման նորմը մ³/հա*	*Ոռոգման նորմը մ³/հա*
*1	Աշնանացան ցորեն և գարի	4	850	3400
2	Եգիպտացորեն	4	750	3000
3	Արևածաղիկ	5	700	3500
4	Կարտոֆիլ (վաղահաս)	5	650	3250
5	Ծխախոտ	12	650	7800
6	Բանջարաբոստանային	16	500	8000
7	Առվույտ	7	900	6300
8	Խաղողի այգի	5	1100	5500
9	Պտղատու այգի	5	1000	5000
10	Բամբակ	5	750	3750
11	Կտավատ	2	800	1600
12	Սոյա	3	600	1800
Արաքսի հովիտ տեղամաս				
1	Խաղողի այգի	10	1100	11000
2	Պտղատու այգի	10	1000	10000

Ծովի մակարդակից 500 -900 մետր բարձրություն

Հ/հ	*Մշակաբույսը*	*Ջրումների քանակը*	*Ջրման նորմը մ³/հա*	*Ոռոգման նորմը մ³/հա*
*1	Աշնանացան ցորեն և գարի	3	850	2550
2	Եգիպտացորեն	3	750	2250
3	Արևածաղիկ	4	700	2800
4	Կարտոֆիլ (վաղահաս)	4	600	2400
5	Ծխախոտ	10	600	6000
6	Բանջարաբոստանային	12	450	5400
7	Առվույտ	5	900	4500
8	Խաղողի այգի	4	1100	4400
9	Պտղատու այգի	4	1000	4000
10	Կտավատ	1	800	800
11	Սոյա	2	600	1200

Ծովի մակարդակից 900 մետրից բարձր

Հ/հ	*Մշակաբույսը*	*Ջրումների քանակը*	*Ջրման նորմը մ³/հա*	*Ոռոգման նորմը մ³/հա*
*1	Աշնանացան ցորեն և գարի	2	800	1600
2	Եգիպտացորեն	3	700	2100
3	Արևածաղիկ	3	700	2100
4	Կարտոֆիլ (վաղահաս)	4	550	2200
5	Ծխախոտ	6	550	3300
6	Բանջարաբոստանային	8	450	3600
7	Առվույտ	4	800	3200
8	Խաղողի այգի	-	-	-
9	Պտղատու այգի	3	1000	3000
10	Կտավատ	1	750	750
11	Սոյա	1	600	600

Ծանոթություն աշնանացան ցորենը և գարին խորքային հորերից ոռոգվելու դեպքում ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը սուբսիդավորման ենթակա չէ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ